

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ORCID ID:0000-0002-3869-5261
anahithakobyan@litinst.sci.am
ana_hak@mail.ru

DOI: 10.54503/1829-0116-2022.2-199

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՔՐԴԵՐ ԵՎ ԵՉԻԴԻՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ*

Բանալի բառեր՝ Խաչատուր Աբովյան, Արևելք, ազգագրություն, արևելագիտություն, բանահյուսություն, պոեզիա, քրդագիտություն, եզիդագիտություն, քրդեր, եզիդիներ:

Հայ մեծ գրող և գիտնական Խաչատուր Աբովյանի պատմա-ազգագրական երկերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում 1846 թ. ստեղծված «Քրդեր և եզիդիներ» գերմաներեն ուսումնասիրությունը (“Die Kurden und Jeziden”), որ պատվիրված է եղել կոմս Ալեքսանդր Խրիստոֆորովիչ Բենկենդորֆի կողմից: Հոդվածը նվիրված է այս երկի ստեղծման պատմությանն ու իրական շարժառիթներին:

Իր ծավալուն հետազոտության մեջ Աբովյանը մանրամասն տեղեկություններ է հաղորդել քրդերի ու եզիդիների ծագման, դավանանքի, կրոնական ծեսերի, արտաքին տեսքի, լեզվահնչունային համակարգի մասին: Սրանով է սկսվում ոչ միայն քրդերի ու եզիդիների ազգաբանական ուսումնասիրությունը, այլև ավելի լայն առումով՝ քրդագիտությունն ու եզիդագիտությունը:

Մեզ է հասել այս աշխատության սևագիր տարբերակը: Այն չունի ընդհանուր խորագիր, բաղկացած է երկու՝ “Die Kurden” ու “Jeziden” գլուխներից և քրդական ու եզիդական ժողովրդական երգերի մի ժողովածուից՝ գերմաներեն տողացի թարգմանությամբ:

Ըստ Էռթյան, այս ստեղծագործությամբ Աբովյանը ժամանակի անխնա

* Ընդունվել է տպագրության 08.12.2022 թ.:

ճիրաններից կորզել ու մեզ է հասցրել Արևելքի բանահյուսության շատ հետաքրքրական նմուշներ, որով արդեն չափազանց կարևորվում է նրա աշխատությունը:

Որքան էլ Աբովյանի գրած էջերը քրդերի ու եզդիների մասին մատնում են հեղինակի մարդասիրությունը, համակրանքն այս վայրի, բայց հպարտ, քաջարի ու գեղեցիկ մարդկանց նկատմամբ, միևնույն է, սա նախևառաջ ոչ թե գրական յուրահատուկ գործ էր Արևելքի այս ժողովուրդների մասին, այլ հույժ կարևոր պետական նշանակության տեղեկատվություն, որն ուներ կիրառական գործառույթ, բայց, ցավոք, նախատեսված չէր ամբողջ ծավալով հրատարակելու համար:

ANAHIT HAKOBYAN

PHD in Philology

Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA

THE TRUE MOTIVES OF THE STUDY “KURDS AND YAZIDIS” BY KHACHATUR ABOVYAN

Key Words: Khachatur Abovyan, East, Ethnography, orientalism, folklore, poetry, Kurdology, Yazidology, Kurds, Yazidis.

In parallel to writing fiction the great Armenian enlightener Khachatur Abovyan also engaged in scientific work and produced a number of historical and ethnographic studies. One of the prominent studies that was written in German, was “Die Kurden und Jeziden” (1846), that was commissioned by Count Alexander Kh. Benkendorf.

In this comprehensive study Abovyan provides detailed information on the origin, religion, rituals, appearance and the linguo-phonetic system of Kurds and Yazidis.

This is the first step not only in the ethnic studies of Kurds and Yezidis but also more generally in Kurdology and Yazidology.

It is the draft of this work that has reached us. It does not have a general title and is comprised of Chapters called “Die Kurden” and “Jesiden”, as well as a collection of Kurdish and Yazidi folk songs providing the literal German translations of the song lyrics.

In essence, this work of Abovyan has saved from the ruthless claws of time and transferred to us very interesting samples of Eastern folklore and this very fact makes his work extremely important.

Although the pages written by Abovyan about Kurds and Yazidis are a testimony

of the author's humanity and sympathy towards these wild but proud, brave and beautiful people, first and foremost this was not meant to be a unique piece of literature about the peoples of East but very important information of national value which had an applicable function but, unfortunately, was not meant for publication in full volume.

АНАИТ АКОПЯН

Кандидат филологических наук

Институт Литературы им. Манука Абеяна НАН РА

ПОДЛИННЫЕ МОТИВЫ СОЗДАНИЯ ТРУДА ХАЧАТУРА АБОВЯНА “КУРДЫ И ЕЗИДЫ”

Ключевые слова: Хачатур, Абовян, Восток, этнография, востоковедение, фольклор, поэзия, курдоведение, езидоведение, курды, езиды.

Параллельно созданию художественных произведений, великий армянский просветитель Хачатур Абовян занимался также научной работой, написав ряд историко-этнографических исследований. Среди них выделяется написанный на немецком языке труд “Die Kurden und Jeziden” (1846), который был заказан графом Александром Христофоровичем Бенкендорфом.

В своем объемистом исследовании Абовян сообщает подробные данные о происхождении, вероисповедовании, религиозных обрядах, лингвофонетической системе языка, о внешнем облике курдов и езидов.

По сути этим начинается не только этнографическое исследование курдов и езидов, но и в более широком смысле – курдоведение и езидоведение.

До нас дошел лишь черновой вариант данного труда. Он не имеет общего заглавия, состоит из глав “Курды”, “Езиды”, а также сборника курдских и езидских народных песен, в дословном немецком переводе. Фактически этим произведением Абовян спас от забвения и донес до наших дней весьма интересные образцы фольклора Востока, и уже это делает его труд чрезвычайно важным.

Страницы о курдах и езидах, написанные Абовяном, хотя и выдают гуманизм, симпатию автора к этим диким, но гордым, отважным и красивым людям, все равно, это прежде всего не своеобразное литературное произведение об этих народах Востока, а особо важная информация государственного значения, которая имела практическую функцию, но, к сожалению, не была предназначена для издания в полном объеме.

Գեղարվեստական երկերի ստեղծմանը զուգահեռ՝ հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը զբաղվել է նաև գիտական աշխատանքով՝ կատարելով մի շարք պատմա-ազգագրական հետազոտություններ: Դրանց շարքում առանձնանում է «Die Kurden und Jeziden» («Քորդեր և եզիդիներ») գերմաներեն ծավալուն ուսումնասիրությունը (Աբովյան, №44; Աբովյան, №99ա; Աբովյան, 1958, էջ 193-242 [243-285])¹: Այն գրվել է 1846 թ., սակայն հեղինակն այդ աշխատության համար սկսել է նյութեր հավաքել դեռ 1843-44 թթ., մինչ պատմական Հայաստանի տարբեր վայրերում շրջագայություններ էր կատարում գերմանացի գիտնականներ Մորից Վազների, Աուգուստ ֆոն Հաքստիաուզենի և Հերման Աբիխի հետ: Հաջորդ գիտարշավը նա ձեռնարկում է միայնակ՝ 1845 թ. դեկտեմբերի վերջերին մոտ երկու շաբաթով մեկնելով դեպի քրդերի ու եզիդիների բնակավայրերը, որպեսզի առավել խորությամբ ուսումնասիրի նրանց բարքերն ու կենցաղը:

Այդ առթիվ ահա թե ինչ է պատմում Աբովյանն ինքը. «Նախանցյալ տարի պարոն կոմս Բ<ենկենդորֆի> ցանկության համաձայն, ծառայությունից ազատ ժամանակս, հենց Քրիստոսի ծննդյան տոներին, ամենադաժան ձմռանը, իմ հաշվին ես ուղևորություն ձեռնարկեցի՝ դեպի քրդերն ու եզիդիները՝ պատմության այդ ֆենոմենները, երկու շաբաթ ապրեցի նրանց մեջ, ավագանուն և կանանց թանկարժեք նվերներ բաժանեցի, որպեսզի գրավեմ նրանց վստահությունը և այդպիսով նրանց հրապուրելով՝ ավելի հարմար և հաստատ կերպով ամեն ինչի մեջ կասկածամիտ այդ վայրենիներից իմանամ բոլոր արժեքավոր տեղեկությունները նրանց բարքերի, սովորությունների, հավատալիքների, բնավորության և նույնիսկ պոեզիայի մասին...» (Աբովյան, №23, էջ 39; Աբովյան, 1956, էջ 151 [194-195]):

Աբովյանը չի զլանում և որոշում է տեղեկություններ քաղել նաև թուրքական, պարսկական ու արաբական աղբյուրներից, այդ առթիվ հարցումփորձ անում ուսումնական մահմեդականներին, որոնց հետ անձամբ ծանոթ էր, սակայն արդյունքի չի հասնում: Նրանք մինչև անգամ ծաղրում են Աբովյանին, որ հետաքրքրվում է «այդ ավանականերով»: Քուրդ մոլլաները նույնպես խուսափողական պատասխան են տալիս՝ ասելով միայն, որ իրենք «աշխարհիս երեսին գոյություն ունեն

1 Հետազայում այս երկը թարգմանվել է նաև քրդերեն (Abovyan, 1986):

2 Աբովյանի ուղևորությունը կատարվել է 1845 թ. դեկտեմբերի վերջերին, իսկ այս տողերը գրվել են 1847 թ. նոյեմբեր-դեկտեմբերին:

Նոյի ժամանակներից» (Աբովյան, №44, էջ 1; Աբովյան, 1958, էջ 193 [243]): Հետազոտությունը պատրաստելիս Աբովյանը նաև ծեռքի տակ է ունեցել հայ պատմագրական աղբյուրները՝ Միքայել Զամչյանի Հայոց պատմությունը (Զամչեանց, 1784; Զամչեանց, 1785; Զամչեանց, 1786), Ղուկաս Ինճիճյանի աշխատությունները (Ինճիճեան, 1806; Ինճիճեան, 1822; Ինճիճեան, 1835 ա; Ինճիճեան, 1835 բ; Ինճիճեան, 1835 գ), Գրիգոր Մագիստրոսի թղթերը¹, Արիստակես Լաստիվերտցու Պատմությունը (Արիստակես Լաստիվերտցի, 1844), «Բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանը (Բառգիրք, 1769):

Սրանով է սկսվում ոչ միայն քրդերի և եզիդիների ազգաբանական ուսումնասիրությունը, այլև ավելի լայն առումով՝ քրդագիտությունն ու եզիդագիտությունը: Ընդ որում, Աբովյանի օրերին տակավին զարգացած չէր դասական լեզվաբանությունը. անգլիացիների կողմից Հնդկաստանը մի քանի տասնամյակ է, ինչ նվաճված էր, և այստեղից էին գալու Եվրոպա համեմատական լեզվաբանությունն ու հնդեվրոպաբանությունը: Չկար որևէ ուսումնասիրություն քրդերի ու եզիդիների պատմության մասին, ուստի Աբովյանն այն ելակետն էր, որից սկսվում է այս ամենը:

Աբովյանից մեզ հասել է այս աշխատության սևագիր տարբերակը: Այն չունի ընդհանուր խորագիր, բաղկացած է “Die Kurden”, “Jesiden” գլուխներից և քրդական ու եզիդական ժողովրդական երգերի մի ժողովածուից, որտեղ բերված են այդ երգերի գերմաներեն բառացի թարգմանությունները: Հետազոտության երկու մաքրագիր օրինակների բնագրերը, որ 1846-47 թթ. ուղարկվել են Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վագների՝ Գերմանիա, և Կովկասի փոխարքա Իշխան Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովին՝ Թիֆլիս, դեռևս չեն հայտնաբերվել: Վագները հետագայում Աբովյանի ուսումնասիրությունն ու նրան կցված երգերի նմուշներն օգտագործել է իր «Հասնապարհորդություն դեպի Պարսկաստան և քրդերի երկիր» գրքում (Wagner, 1852)²:

Իր ծավալուն հետազոտության մեջ Աբովյանը մանրամասն տեղեկություններ է հաղորդում քրդերի ու եզիդիների ծագման, դավանանքի, կրոնական ծեսերի, արտաքին տեսքի, լեզվահնչյունային հա-

1 Հավանաբար, Աբովյանը օգտագործել է Միքայել Զամչյանի Պատմությունը (Զամչեանց, 1785, էջ 892-895), ինչպես նաև, որ չպետք է բացառել՝ ելնելով Աբովյանի պրպտուն բնավորությունից, Գրիգոր Մագիստրոսի ծեռագրերի որևէ պատճեն, քանի որ նրա թղթերի քննական բնագիրը տպագրվել է Աբովյանի մահից շուրջ 60 տարի անց (Գրիգոր Մագիստրոս, 1910):

մակարգի մասին: Նա հատկապես հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում եզիդիների և հայերի կրոնական արարողությունների, պաշտամունքի մանրամասների, լեզվի ու սովորույթների միջև՝ հանգելով այն եզրակացության, որ եզիդիները քրիստոնեության ժամանակ հայ ժողովրդից անջատված, զգալի չափով հեթանոսական հավատին հարազատ մնացած և, հետևաբար, ժողովրդի հիմնական հատվածի կողմից մերժված խումբ են, որոնք, սակայն, հարևան այլադավաններից ամենամոտոս են մնացել հայերին իրենց հավատով ու փոխադարձ համակրանքով: Աբովյանը դիպուկ համեմատում է հայ մշակույթի ներքին զարգացումներով պայմանավորված տեղական աղանդները և եզիդիների կրոնը (Աբովյան, 1958, էջ 236 [278]):

Այս աշխատության մեջ հեղինակը նաև հատուկ անդրադարձ է կատարում քրդերի ազգային պոեզիային՝ նկատելով, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ ստեղծագործում են արագ ու հանպատրաստից, բնականաբար, իրենց պարզ զգացումների ու պատկերացումների սահմաններում գովերգելով իրենց շրջապատող աշխարհի ու բնությունը, սիրելիներին, զենքերն ու նժույգները, և, այնուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրին էլ կարելի է իսկական բանաստեղծ համարել: Բերենք երկու օրինակ հայերեն տողացի թարգմանությամբ.

Յոթ աստղերը դուրս են եկել կշեռքի հետ,
Ես էլ եմ բացել կուրծքս՝ մտքերում սուզված,
Հետո նժույգիս հետ միացել մարտաշարքերին՝
Ռշտունիների երկրում (Աբովյան Խ., 1958, էջ 279):

Իմ սիրականը հյուր է եկել մեզ մոտ,
Ես դրի նրա գլխի տակ բազբանդները իմ,
Նրա տակ փռեցի հորասանի խալի,
Սիրով կփոխեմ սև աչքես, բոյս և բազուկներս
Նրա խարտյաշ մազերի հետ:
Իսկ եթե դրանով էլ նա գոհ չմնա,
Կգոհեմ նրան սիրտս ու հոգիս (Աբովյան Խ., 1958, էջ 279-280):

Աբովյանը շեշտում է, որ ի տարբերություն տարածաշրջանի մյուս ժողովուրդների՝ քրդերը երբեք չեն երգում թուրքերեն՝ ցավով արձանագրելով, որ «Հայաստանի աշուղների մեծամասնությունը, որոնց թիվը ներկայումս շատ-շատ է, միայն թուրքերեն լեզվով է ստեղծագոր-

ծում» (Աբովյան, 1958, էջ 198 [247]): Աբովյանն այստեղ բարձրացնում է բանահավաքության հարցը, մի խնդիր, որով նրանից հետո պետք է լրջորեն զբաղվեին արդեն հետագա սերնդի մեր գիտնականները՝ Գարեգին Սրվանձտյանցը, Երվանդ Լալայանը, Գարեգին Հովսեփյանը, Հովսեփ Օրբելին, Մանուկ Աբեղյանը:

Իր «Քրդեր և եզիդիներ» ստեղծագործությամբ Աբովյանը, ըստ էության, ժամանակի անխնա ճիրաններից կորզել ու մեզ է հասցրել Արևելքի բանահյուսության շատ հետաքրքրական օրինակներ, որով արդեն չափազանց կարևորվում է նրա աշխատությունը: «Միջնադարյան այդ միևերացումների բանաստեղծությունները,- գրում է հեղինակը,- վարպետի գործեր են, բայց որովհետև գրի չեն առնվում, բնականաբար, կորստի են մատնվում մի քանի տարուց հետո: Որքան լավ կլիներ այդ բոլորը հավաքել, բայց հարկավոր է դրա համար լի գրպան և ազատ ժամանակ՝ գյուղից գյուղ անցնելու և հավաքելու համար» (Աբովյան, 1958, էջ 198 [247]):

Իսկ առայժմ աշխատության Հավելվածում նա բերում է մի քանի նմուշ քրդական ու եզիդիական ժողովրդական երգերից՝ գերմաներեն բառացի թարգմանությամբ: Դրանք են.

1) **Lyrische Gedichte aus der Kurdischen Sprache** [Լիրիկական բանաստեղծություններ՝ թարգմանված քրդերենից],

2) **Ein Esidenlied** [Եզիդիական երգ],

3) **Das Kriegslied der Jesiden auf der Schlacht gegen den Schech Ghassum, den anführer der Türken und Kurden. Keschisch-Polo** [Եզիդիական ռազմերգ թուրքերի և քրդերի առաջնորդ Շեխ-Ղասսումի դեմ վարած ճակատամարտի մասին. Քեշիշ Պոլո],

4) **Das Siegeslied über die Niederlage der Dschalalischen Kurden, die der berühmte Suleiman Agha im Jahre 1839, in Bajazid ihnen beigefügt hat** [Հաղթական երգ Ջալալի քրդերի այն պարտության մասին, որ նրանց մատնեց հռչակավոր Սուլեյման-աղան 1839 թվականին Բայազետում] (Աբովյան, № 99ա):

Վերոհիշյալ երգերի միայն հայերեն թարգմանությունը ժամանակին հրատարակել է նշանավոր բանասեր Արամ Ղանալանյանը (Ղանալանյան, 1941, էջ 75-79): Գերմաներեն հեղինակային բնագիրը առաջին անգամ տպագրվել է Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության VIII հատորում (Աբովյան, 1958, էջ 236-240), ինչպես նաև կատարվել է հայերեն նոր թարգմանություն (Աբովյան, 1958, էջ 279-283):

Այս ստեղծագործություններում հատկապես գերիշխում են ռազմի երգերը, նույնիսկ լիրիկական բովանդակությամբ բանաստեղծություններում սիրային մոտիվները հաճախ միահյուսված են ռազմականին: Դրանցից երկուսում հերոսուհու սիրեցյալը հարկադրված է լքել նրան ու շտապել Ռաշիդ-փաշայի բանակը՝ թշնամու դեմ ճակատամարտ մղելու համար: Երգերից մեկն էլ նվիրված է իր ժողովրդի ազատության համար կռիվներ մղած քաջարի ռազմիկ, հայ քահանա Պողոսին, որին եզիդիները մեծ ակնածանքով էին վերաբերվում և անվանում էին Քեշիշ Պոլո:

Հետագայում Աբովյանն այս ծավալուն գերմաներեն ուսումնասիրության «Եզիդիներ» գլխի համառոտ տարբերակը տպագրության է հանձնում Թիֆլիսի “Кавказ” լրագրին. այն լույս է տեսնում ռուսերեն թարգմանությամբ և առանց հեղինակի անվան (Абовян, 1848 а, с. 31-32; Абовян, 1848 б, с. 35-36; Абовян, 1848 в, с. 68-80)¹, իսկ «Քրդերը» տպագրվում է արդեն Աբովյանի մահից հետո՝ 1848 թ. վերջերին, նրա անունով և ընդարձակ խմբագրականով (Абовян, 1848 г, с. 184; Абовян, 1848 д, с. 188-189; Абовян, 1848 е, с. 196; Абовян, 1848 ж, с. 197; Абовян, 1848 з, с. 196-197; Աբովյան, 1958, էջ 353-372 [373-393])²:

Աբովյանի արխիվում պահվում է նաև քրդերին նվիրված 10-էջանոց գերմաներեն մի սևագիր ինքնագիր, որ գրվել է 1846 թ. կեսերից հետո և ունի հետևյալ խորագիրը. “Ein Blick über den Ursprung, Volkstümlichkeit, Sprache, Sitten und Gebräuche der Kurden” («Ակնարկ քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի և սովորույթների մասին»): Սա գերմաներեն ընդարձակ ուսումնասիրության համառոտ շարադրանքն է (Աբովյան, №43; Աբովյան, 1958, էջ 339-344 [345-349], 446-450):

Ինչպես արդեն վերը նշեցինք, Աբովյանի պրպտումները քրդերի ու եզիդիների պատմության, մշակույթի և տնտեսության վերաբերյալ պատվիրված էին վերին աստյանների կողմից, չնայած որ նա դեռ մանկուց էր հետաքրքրված այդ ժողովուրդների բարքերով ու հետագայում ցանկանում էր մի ծանրակշիռ աշխատություն նվիրել նրանց պատ-

1 Այս անանուն հոդվածի՝ Աբովյանի գրչին պատկանելու իրողությունը ժամանակին ապացուցել է հայագետ Պիոն Հակոբյանը (Հակոբյան, 1953, էջ 2):

2 Հայերեն թարգմանությունը կատարել է բանասեր Երվանդ Շահագիզը և Նախապես տպագրել «Սովետական գրականություն» ամսագրում (Շահագիզ, 1941, էջ 92-102): Աբովյանի այս հոդվածը ժամանակին ուսումնասիրել է նաև արևելագետ Քանատ Կուրդոնը (Курдоев, 1955, с. 89-98):

մոլայանը: Այնուհանդերձ, կարճ ժամանակում հեղինակն իր գործի թանձր վրձնահարվածները փորձել է վերամշակել, լրացնել ու ստեղծել է մի ամբողջական բազմաժանր ստեղծագործություն: Այդ մասին վկայում են նրա՝ այս թեմային վերաբերող սևագիր ու մաքրագիր բազմաթիվ ձեռագրերը:

Աբովյանի հույսերը, որ իր աշխատանքը կիրատարակվի նույն պատվիրատուների օգնությամբ, չարդարացան: Կարծում ենք՝ պատճառը հետևյալն է. Աբովյանի նկարագրությունները, սեփական դիտարկումները, պատմական և դավանաբանական էքսկուրսները, քրդերին ու եզիդիներին նվիրված էթնոհոգեբանական դիտողությունները կատարված են հայ գիտնականին հատուկ բժախնդրությամբ: Սա հենց այն էր, ինչ ուզում էին վերադասները, մասնավորապես՝ կայսերական գրասենյակի Երրորդ բաժանմունքի ղեկավար կոմս Ա. Խ. Բենկենդորֆը: Աբովյանը նրանց անհրաժեշտ էր որպես գիտակ, քրդերի ու եզիդիների մասին կարևորագույն տվյալներ ստանալու գործիք, որոնք կիրառվելու էին Կովկասն ու նրա հարակից մարզերը քաղաքական և այլ առումներով ցարական Ռուսաստանի կողմից յուրացնելու համար:

Որքան էլ Աբովյանի գրած էջերը քրդերի ու եզիդիների մասին մատնում են հեղինակի մարդասիրությունը, համակրանքն այս վայրի, բայց հպարտ, քաջարի ու գեղեցիկ մարդկանց նկատմամբ, անգամ երբ դատապարտվում է գողություն անելու և ավազակությամբ զբաղվելու նրանց մասնագիտական հակումը, միևնույն է, սա նախևառաջ ոչ թե գրական յուրահատուկ գործ էր Արևելքի այս ժողովուրդների մասին, այլ հույժ կարևոր պետական նշանակության տեղեկատվություն, որն ուներ կիրառական գործառույթ, բայց նախատեսված չէր ամբողջ ծավալով կիրատարական համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբովյան, 1941 – **Աբովյան Խ.**, Քրդերը // Սովետական գրականություն, 1941, №9-10, էջ 92-102:

Աբովյան, 1956 – **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. VII, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 526 էջ:

Աբովյան, 1958 – **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. VIII, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 474 էջ:

Արիստակես Լաստիվերտցի, 1844 – Պատմութիւն **Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցոյ**, Վենետիկ, Ս. Ղազար, 1844, 8+124 էջ:

Բաղդիրը, 1769 - Բաղդիրը Հայկազեան լեզուի, հ. II, Վենետիկ, տպարան Աստուխի Պոռթոլի, 1769, 1770 էջ:

Գրիգոր Մագիստրոս, 1910 - Գրիգոր Մագիստրոսի թղթերը: Բնագիրն առաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, տպարան Գևորգ Սանոյանցի, 1910, ԽԸ+352 էջ:

Ինճիճեան, 1806 - Ինճիճեան Ղ., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, Մասն առաջին, Ասիա, հատոր Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1806, 424+38 էջ:

Ինճիճեան, 1822 - Ինճիճեան Ղ., Ստորագրություն հին Հայաստանեայց: Ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց, հանեալ ի գրոց մերոց նախնեաց և այլոց ազգաց: Մեծ Հայք (Հին Հայաստան), Վենետիկ, Ս. Ղազար, 1822, 8+554 էջ:

Ինճիճեան, 1835 ա - Ինճիճեան Ղ., Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1835, 12+476 էջ:

Ինճիճեան, 1835 բ - Ինճիճեան Ղ., Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1835, 427 էջ:

Ինճիճեան, 1835 գ - Ինճիճեան Ղ., Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Գ, Վենետիկ, Ս. Ղազար, 1835, 394 էջ:

Հակոբյան, 1953 - Հակոբյան Պ., Լոր Լյուբեր Խաչատուր Աբովյանի մասին // Սովետական Հայաստան, 1953, №216, սեպտեմբերի 12, էջ 2:

Ղանալանյան, 1941 - Ղանալանյան Ա., Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, Արմֆան-ի հրատ., 1941, 142 էջ:

Չամչեանց, 1784 - Չամչեանց Մ. վ., Պատմություն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հատոր Ա, ի Վենետիկ, ի տպարանի Պետրոսի Վաղվազեանց, 1784, 803 էջ:

Չամչեանց, 1785 - Չամչեանց Մ. վ., Պատմություն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հատոր Բ, ի Վենետիկ, ի տպարանի Պետրոսի Վաղվազեանց, 1785, 1060 էջ:

Չամչեանց, 1786 - Չամչեանց Մ. վ., Պատմություն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հատոր Գ, ի Վենետիկ, ի տպարանի Յովհաննու Փիացեանց, 1786, 896+196 էջ:

Абовян, 1848 а - Абовян Х., Иезиды // Кавказ, 1848, 21 февраля, №8, с. 31-32.

Абовян, 1848 б - Абовян Х., Иезиды // Кавказ, 1848, 28 февраля, №9, с. 35-36.

Абовян, 1848 в - Абовян Х., Иезиды // Сборник газеты "Кавказ". Первое полугодие 1848 года, Тифлис, 1848, с. 68-80.

Абовян, 1848 г – **Абовян Х.**, Курды // Кавказ, 1848, 13 ноября, №46, с. 184.
Абовян, 1848 д – **Абовян Х.**, Курды // Кавказ, 1848, 20 ноября, №47, с. 188-189.

Абовян, 1848 е – **Абовян Х.**, Курды // Кавказ, 1848, 4 декабря, №49, с. 196.
Абовян, 1848 ж – **Абовян Х.**, Курды // Кавказ, 1848, 11 декабря, №50, с. 197.

Абовян, 1848 з – **Абовян Х.**, Курды // Кавказ, 1848, 18 декабря, №51, с. 196-197.

Курдоев, 1955 – **Курдоев К.**, Хачатур Абовян как курдовед-этнограф // Известия Академии Наук Армянской ССР, Общественные науки, 1955, №10, с. 89-98.

Абовյան, 1986 – **Абовյան Хачатур**, Կորժ. Էջմի. հաշրկը, յէ արմանի տ'արշմէկը, քէշհէբը նիւսի: Վէրիւր Էշու. Նէշրէտա «հայաստան», Երեւան, 1986, 136 ր'յ (**Արմյան Խ.**, Զրդեր. Եզդիներ: Վազմեց, թարգմանեց, առաջարկը գրեց Վազգիտ Աշոն (քրդերեն), Երևան, «Հայաստան» հրատ., 1986, 136 էջ):

Wagner, 1852 – **Wagner M.**, Reise nach Persien und dem Lande der Kurden. Zweiter Band. Mit einem Anhang: Beiträge zur Völkerkunde und Naturgeschichte West-Asiens. Leipzig: Arnoldische Buchhandlung, 1852, IV+315 S.

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Արմյան, № 23 – Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Խ. Արմյանի արխիվ, № 23, 60 էջ:

Արմյան, № 43 – ԳԱԹ, Խ. Արմյանի արխիվ, № 43, 10 էջ:

Արմյան, № 44 – ԳԱԹ, Խ. Արմյանի արխիվ, № 44, 50 էջ:

Արմյան, № 99ա – ԳԱԹ, Խ. Արմյանի արխիվ, № 99ա, 6 էջ:

REFERENCES

Abovyan, 1848 a – **Abovyan Kh.**, Ezidi / Yazidis // Kavkaz, Tiflis, 1848, February 21, №8, p. 31-32 (In Russian).

Abovyan, 1848 b – **Abovyan Kh.**, Ezidi / Yazidis // Kavkaz, Tiflis, 1848, February 28, №9, p. 35-36 (In Russian).

Abovyan, 1848 c – **Abovyan Kh.**, Ezidi / Yazidis // Collection of the Newspaper "Kavkaz", First half of 1848, Tiflis, 1848, p. 68-80 (In Russian).

Abovyan, 1848 d – **Abovyan Kh.**, Kurdi / Kurds // Kavkaz, Tiflis, 1848, November 13, №46, p. 184 (In Russian).

Abovyan, 1848 e – **Abovyan Kh.**, Kurdi / Kurds // Kavkaz, Tiflis, 1848, November 20, №47, p. 188-189 (In Russian).

Abovyan, 1848 f – **Abovyan Kh.**, Kurdi / Kurds // Kavkaz, Tiflis, 1848, December 4, №49, p. 196 (In Russian).

Abovyan, 1848 g – **Abovyan Kh.**, Kurdi / Kurds // Kavkaz, Tiflis, 1848, December 11, №50, p. 197 (In Russian).

Abovyan, 1848 h – **Abovyan Kh.**, Kurdi / Kurds // Kavkaz, Tiflis, 1848, December 18, №51, p. 196-197 (In Russian).

Abovyan, 1941 – **Abovyan Kh.**, Krderi / Kurds // Sovetakan grakanutyun / Soviet Literature, Yerevan, 1941, №9-10, p. 92-102 (In Armenian).

Abovyan, 1956 – **Abovyan Kh.**, Erkeri liakatar zhoghovatsu tasy hatorov, VII hator / The Complete Works in Ten Volumes, Vol. VII, Yerevan, Armenian SSR AS Publishing, 1956, 526 pages (In Armenian).

Abovyan, 1958 – **Abovyan Kh.**, Erkeri liakatar zhoghovatsu tasy hatorov, VIII hator / The Complete Works in Ten Volumes, Vol. VIII, Yerevan, Armenian SSR AS Publishing, 1958, 474 pages (In Armenian).

Abovyan, 1986 – **Abovyan Kh.**, Kord. Ezdi / Kurds. Yazidis. Translation and Preface by Wazire Asho, Yerevan, “Hayastan” Publishing, 1986, 136 pages (In Kurdish).

Aristakes Lastiverts, 1844 – Patmutyun Aristakea vardapeti Lastivertsvo / History of **Aristakes archimandrite Lastiverts**, Venice, St. Lazaro, 1844, 8+124 pages (In Armenian).

Bargir, 1769 – Bargir Haykazyan lezvi / Dictionary of Armenian Language, vol. II, Venice, Antonio Bortoli Publishing, 1769, 1770 pages (In Armenian).

Chamcheants, 1784 – **Chamcheants M.**, Patmutyun Hayots i skzbane ashkharhi minchev tsam Tearn 1784, Hator I / History of Armenia from the Beginning of the World until the Year of Our Lord 1784, Vol I, Venice, Petros Vaghvazeants Publishing, 1784, 803 pages (In Armenian).

Chamcheants, 1785 – **Chamcheants M.**, Patmutyun Hayots i skzbane ashkharhi minchev tsam Tearn 1784, Hator II / History of Armenia from the Beginning of the World until the Year of Our Lord 1784, Vol II, Venice, Petros Vaghvazeants Publishing, 1785, 1060 pages (In Armenian).

Chamcheants, 1786 – **Chamcheants M.**, Patmutyun Hayots i skzbane ashkharhi minchev tsam Tearn 1784, Hator III / History of Armenia from the Beginning of the World until the Year of Our Lord 1784, Vol III, Venice, Hovhannes Piatseants Publishing, 1786, 896+196 pages (In Armenian).

Ghanalanyan, 1941 – **Ghanalanyan A.**, Abovyany ev zhoghovrdakan banahjusutyuny / Abovyan and national folklore, Yerevan, Armfan press, 1941, 142 pages (In Armenian).

Grigor Magistros, 1910 – **Grigor Magistrosi** tghtery / The Letters of Grigor

Magistros. The Original Text with Preface and Commentaries was published for the first time by K. Kostanyants. Alexandropol, Gevorg Sanoyants Publishing, 1910, 48+352 pages (In Armenian).

Hakobyan, 1953 – **Hakobyan P.**, Nor njuter Khachatur Abovyani masin / New Materials about Khachatur Abovyan // Sovetakan Hayastan / Soviet Armenia, Yerevan, 1953, September 12, №216, p. 2 (In Armenian).

Intchichean, 1806 – **Intchichean Gh.**, Ashkharhagrutyun chorits masants ashkharhi / Geography of the four parts of the World, Part I: Asia, Vol. I, Venice, St. Lazaro, 1806, 424+38 pages (In Armenian).

Intchichean, 1822 – **Intchichean Gh.**, Storagrutyun hin Hayastaneajts / Topography of Ancient Armenia, Venice, St. Lazaro, 1822, 8+554 pages (In Armenian).

Intchichean, 1835 a – **Intchichean Gh.**, Hnakhosutyun ashkharhagrakan Hayastaneajts ashkharhi / Antiquities of Armenia, Vol. I, Venice, St. Lazaro, 1835, 12+476 pages (In Armenian).

Intchichean, 1835 b – **Intchichean Gh.**, Hnakhosutyun ashkharhagrakan Hayastaneajts ashkharhi / Antiquities of Armenia, Vol. II, Venice, St. Lazaro, 1835, 427 pages (In Armenian).

Intchichean, 1835 c – **Intchichean Gh.**, Hnakhosutyun ashkharhagrakan Hayastaneajts ashkharhi / Antiquities of Armenia, Vol. III, Venice, St. Lazaro, 1835, 394 pages (In Armenian).

Kurdoev, 1955 – **Kurdoev Q.**, Khachatur Abovyan kak kurdoev-etnograf / Khachatur Abovyan as a Kurdish scholar-Ethnographer // Proceedings of the Academy of Sciences of the Armenian SSR, Social Sciences, Yerevan, 1955, №10, p. 89-98 (In Russian).

Wagner, 1852 – **Wagner M.**, Reise nach Persien und dem Lande der Kurden. Zweiter Band. Mit einem Anhang: Beiträge zur Völkerkunde und Naturgeschichte West-Asiens / Journey to Persia and the Land of the Kurds. Vol. II. With an Appendix: Contributions to the Ethnology and Natural History of West Asia. Leipzig: Arnoldian Bookstore, 1852, IV+315 pages (In German).

ARCHIVAL MATERIALS

Abovyan, № 23 – Eghishe Charenci anvan Grakanutyun ev arvesti tangaran (ajsuhetev - GAT), Khachatur Abovyani archiv / State Museum of Literature and Art after Yeghishe Charents, Yerevan (henceforth SMLA), Khachatur Abovyan's Collection, № 23, 60 pages.

Abovyan, № 43 – GAT, Khachatur Abovyani archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, № 43, 10 pages.

Abovyan, № 44 – GAT, Khachatur Abovyan's archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, № 44, 50 pages.

Abovyan, № 99a – GAT, Khachatur Abovyan's archiv / SMLA, Khachatur Abovyan's Collection, № 99a, 6 pages.

Անահիտ Հակոբյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ 19-րդ դարի հայ գրականություն, բանահյուսություն, հայ-գերմանական գրական կապեր, արվեստի պատմություն: Հեղինակ է 9 գիտական հոդվածի և մեկ մենագրության:

ORCID ID: 0000-0002-3869-5261

anahithakobyan@litinst.sci.am

ana_hak@mail.ru

Anahit Hakobyan – PHD in Philology, Researcher at the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA. Scientific interests: Armenian Literature of 19th century, Folklore, Armenian-German Literary Connections, History of Art. Author of 9 articles and one monograph.

ORCID ID: 0000-0002-3869-5261

anahithakobyan@litinst.sci.am

ana_hak@mail.ru

Анаит Акопян – кандидат филологических наук, научный сотрудник Института литературы им. Манука Абегамяна НАН РА. Научные интересы: Армянская литература 19-го века, фольклор, армяно-немецкие литературные связи, история искусств. Автор 9 статей и одной монографии.

ORCID ID: 0000-0002-3869-5261

anahithakobyan@litinst.sci.am

ana_hak@mail.ru